**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հուլիսի 2017 թ. N 77

ք.Ստեփանակերտ

## *ՀԱՄԱՅՆՔԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՆԱՍՆԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱԿՏԻ ՏԻՊԱՅԻՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի ՆՀ-40 հրամանագրի 136-րդ կետի 13-րդ ենթակետով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 63 որոշման 12 կետի դ) ենթակետով և ելնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անասնահամաճարակային կայուն իրավիճակի և ապահովության պահպանման անհրաժեշտությունից՝

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Հաստատել համայնքը սպասարկող անասնաբույժների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անասնահամաճարակային կայուն իրավիճակի և ապահովության պահպանման նպատակով իրականացվող անասնահամաճարակային միջոցառումների օրացուցային կատարողական ակտի (այսուհետ՝ ակտ) տիպային ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ ապահովել սույն հրամանի թղթային և էլեկտրոնային առաքումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուժական սպասարկման կայաններ՝ անասնաբույժներին իրազեկելու և սույն հրամանի 1-ին կետով հաստատված ակտի շրջանակներում հետագա գործունեությունը կազմակերպելու նպատակով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ Ն.Մուսայելյանին:

***Ա. ՄԽՈՅԱՆ***

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2017 թվականի ____________-ի
N ______ հրամանի

***Տիպային ձև***

## *ՀԱՄԱՅՆՔԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՆԱՍՆԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱԿՏ*

__________________ անասնաբուժական սպասարկման կայան __________ _____ 20___թ.

***Կ.Տ.***

| | Ամիս, ամսաթիվ | Միջոցառման անվանումը | Գլխաքանակը և/կամ թվաքանակը | | | | | Համայնքը | Անասնատիրոջ անուն/ազգանուն (անվանում) | Անասնատիրոջ ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԽԵԱ | ՄԵԱ | թռչուն | խոզ | շուն | | | |
| 1. | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | |
| 3. | | | | | | | | | | |
| 4. | | | | | | | | | | |
| 5. | | | | | | | | | | |
| 6. | | | | | | | | | | |
| 7. | | | | | | | | | | |
| 8. | | | | | | | | | | |
| 9. | | | | | | | | | | |
| 10. | | | | | | | | | | |
| … | | | | | | | | | | |

Անասնաբույժ՝ _______________ ____________________ ______________
(ստորագրություն) (անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

***ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ***
***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ***